ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.13. Գերմանիա: Աշխարհագրական դիրքը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը

• • •

ԳԴՀ ***տնտեսաաշխարհագրական դիրքի*** գլխավոր առանձնահատկությունը կենտրոնական դիրքն է Եվրոպայում, որտեղ հատվում են ջրային, ցամաքային, օդային և խողովակաշարային կարևոր ուղիներ: Հաղորդակցման ուղիներից առավել կարևոր են լայնական ուղղությամբ ձգվող հաղորդակցության տարանցիկ ճանապարհները: Գերմանիայի 9-ը հարևաններից 8-ը բարձր զարգացած երկրներ են և սերտ կապեր ունեն միմյանց հետ:

• • •

Արդյունաբերության զարգացման բնառեսուրսային ներուժը ԳԴՀ չափանիշներով երկրի համար փոքր է: Գերմանիան մոտ 20 անգամ ավելի շատ հանքային հումք է օգտագործում, քան արդյունահանվում է տեղում: Վառելիքային ռեսուրսներից հարուստ է միայն ածխով (**Ռուր**, **Սաար**): ԳԴՀ ընդերքը հարուստ է կալիումական աղերի և քարաղի համաշխարհային նշանակության պաշարներով (**Թյուրինգիա**), որոշ շինանյութերով:

• • •

Գերմանացիներն են ստեղծել ներքին այրման, գազային, արագընթաց բենզինային շարժիչները, էլեկտրահալման վառարանը, էլեկտրական մանրադիտակը, սնդիկային վակուումային պոմպը ևն:

Համաշխարհային ճանաչում ունեն գերմանացի գիտնականներ Յո. Կեպլերը, Ի. Հալլեն, մաթեմատիկոսներ և ֆիզիկոսներ Գ. Լայբնիցը, Կ. Գաուսը, Գ. Օհմը, Վ. Վեբերը, Ֆ. Նեյմանը, Հ. Հելմհոլցը, Մ. Պլանկը, Նոբելյան մրցանակի առաջին դափնեկիր Կ. Ռենտգենը, Ա. Էյնշտեյնը, Յո. Գլաուբերը, Ա. Հումբոլդտը, Ի. Կանտը, Գ. Հեգելը: Գրականության դասականներից են Ֆ. Շիլլերը, Հ. Հայնեն, Է. Ռեմարկը, Ս. Ցվայգը: Ազգային երաժշտական մշակույթի ձևավորման գործում բացառիկ մեծ դեր են խա-

ղացել Յո. Բախի, Գ. Հենդելի, Ֆ. Մենդելսոնի, Ռ.Շումանի, Լ. Բեթհովենի և այլոց ստեղծագործությունները: Նրանց սոսկ թվարկումն արդեն մեծ խորհուրդ ունի:

• • •

Գետերը համեմատաբար ջրառատ են և նավարկելի, իսկ ջրապահովման հիմնախնդիրը մասամբ լուծվում է արդյունաբերության մեջ ջրօգտագործման փակ շրջանառությամբ՝ օգտագործված ջուրը մաքրվում և նորից դրվում է շրջանառության մեջ: Գերմանիայի *տարածքի 30%-ն անտառածածկ է*: Անտառները խնայողաբար են օգտագործվում: Երկրում գործում են բնապահպանական շատ խիստ օրենքներ: Երկրի տարածքից շարունակ դուրս են բերվում «աղտոտ» արտադրությունները և տեղաբաշխվում զարգացող երկրներում:

• • •

Պետության ղեկավարը դաշնության նախագահն է, բայց երկրի քաղաքական, տնտեսական զարգացման ռազմավարությունը որոշում է վարչապետը՝ **կանցլերը**: Նա է երկրի գործադիր իշխանության ղեկավարը:

Գերմանիայի համար շատ կարևոր դեր են խաղում **Հյուսիսային** և **Բալթիկ** ծովերը և դրանք միմյանց կապող **Քիլի** ծովային ջրանցքը **Յուտլանդիա** թերակղզու վրա: Ջրային կարևոր զարկերակ են **Հռենոս**, **Ռուր**, **Էլբա** գետերը, որոնցով մեծ քանակությամբ բեռներ են տեղափոխվում: Գերմանիան ՆԱՏՕ-ի գլխավոր հենարանն է Եվրոպայում և ԱՄՆ-ից հետո ունի այդ կազմակերպության ամենահզոր բանակը:

• • •

Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ Գերմանիան հայտնվել է ժողովրդագրական բարդ իրավիճակում: Բնական աճը բացասական է, խիստ նվազել է ծնելիությունը: Ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակը հաղթահարվում է ներգաղթի հաշվին: